ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆ

Բարեպաշտ Վարդանի գաղափարական որդին, Տարօնի Հացեկաց գիւղացին, Մեծն Ներսէսի մաքուր հոգով ու շնչով դաստիարակված ժրաջան աշակերտը, հելլէն, պարսիկ և ասորի լեզուների հմուտ լեզուագէտ ուսուցիչը, արքունի պալատի գործավարութեան քաջ ղեկավար անմահ Մեսրոպը, այդ հայկական տառերի սրբազան հայրը արհամարհեց աշխարհային ամեն տեսակ փառք ու ճոխութիւն, հեռացաւ արքունի փարթամ կեանքից, թողեց արդիւնաւոր փափուկ պաշտօնը, հագաւ հոգևորականի սքեմ, քաշվեց Գողթան գաւառները և սկսեց իր առաքելական պաշտօնը. քարոզեց Աւետարանի փրկարար գաղափարը և սկսեց տարածել կռապաշտութեան մէջ թաղվածների շրջանում քրիստոնէութիւն։

Բայց ահա այդ ժամանակ սրբազան հայրը հանդիպում է խոշոր խոչընդոտների։ Չը կար հայկական գիր, գրականութիւն. չը կար հայերէն գիրք։ Կարդում էին օտարի գրքերը օտարի լեզուներով և շատերը իրանց կարդացածից բան չէին հասկանում։ «Ուրեմն պէտք է գտնել հայկական տառեր, ունենալ հայերէն գրքեր» մտածում էր ս. Մեսրոպ և այս մտքերով գիշեր-ցերեկ մաշվում էր։ Մտածմունքների հետ սկսեց գործ։ Սրբազան գործին մասնակցեցին ժամանակակից Վռամշապուհ թագաւորը, ս. Սահակ կաթողիկոսը, հրապարակ եկան գործին օգնելու հայր Աբէլը, Դանիէլ եպիսկոպոսը, Վահրիճը և ուրիշները։

Այս բոլորի ջանքերը ապարդիւն անցան և յետ քաշվեցին գործից, իսկ ս. Մեսրոպը դարձեալ չը յուսահատվեց, պանդխտութեան գաւազանը ձեռք առաւ և իր սիրելի աշակերտների հետ սկսեց մի երկարատև մաշող ճանապարհորդութիւն։

Մտաւ Եդեսիա, բաղխեց ճարտասան Պզատօնի, Հռոփանոսի դռները, գնաց Փիւնիկէ, անցաւ Սամոս, բայց և այնպէս այդ բոլորը ի զուր անցան։ Մեսրոպը յոյսը կտրած մարդկանցից՝ վերջին յուսահատութեան մէջ դիմեց Արարչի օգնութեան և խորասուզվեց ջերմեռանդ աղօթքների մէջ։ Ահա այդ ժամանակ աջ ծեռքի մի թաթ գրեց վէմի վրա հայկական տառերը։ Վերակենդանացաւ հայրենասէր հայրը և 405 թ. հայկական տառերը ձեռին մտաւ Հայաստան։ Այդ օրը փառաւոր տօներ և փառաւոր ուրախութիւն սարքեցին։

Այդ օրվանից մինչև 1443 թ. տպարան չը կար։ Գրքերը գրում էին տաժանելի աշխատութիւններով։

Ահա հրապարակ եկաւ երկրորդ մեծ բարերարը՝ գերմանացի Յովհաննէս Գուտենբերգը և հնարեց շարժական տառեր, ստեղծեց տպագրութիւնը և հեշտացրեց գրականութեան ծաղկելը։

Կեցցէ՛ ս. Մեսրոպը, կեցցէ՛ Գուտենբերգը։ Դրանք մարդկութեան համար անմահ դէմքեր են և յաւիտեանս յաւիտենից անմահ կը մնան։

Հայր Մեսրոպ, քանի երկինք և երկիր կայ, քանի արեգակը և լուսինը կատարում են իրանց շրջանառութիւնը, դու մեր սրտերում անմահ պիտի մնաս։ Սերնդէ սե-

բունդ քո գերեզմանի ուխտաւորները անպակաս պիտի լինեն։

Ես որպէս Կարսի քաղաքային դպրոցի ուսուցիչ՝ իմ աշակերտներով սլանում եմ մտքով ու հոգով դէպի Օշական, համբուրում ս. Մեսրոպի գերեզմանը և ողջունում ենք այս համազգային մեծ յօբելեանը՝ և աշակերտներից կոպէկ-կոպէկ հաւաքած 10 ռուբլի, որպէս աշակերտական սրտարուխ, նուէր գցում եմ դպրոցական ֆոնդի գանձանակը։

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեան

Կարս